Վահան Տերյան

14 տող (Մանկուց ընտրեցի ճամփորդական ցուպ...)

Մանկուց ընտրեցի ճամփորդական ցուպ,
Թողի հայրենի տնակըս ավեր,
Ահա ես հիմա մի մոլոր ասուպ,
Ես կույր եմ հիմա, մռայլ ու անսեր:
Պայծառ ըղձերը ինձ զուր մաշեցին,
Չըողջունեց ինձ ոչ մի արշալույս,
Ինձ լուռ մոռացան, ինձ չըհիշեցին,
Իմ սրտում մեռան սեր, ցնորք ու հույս:
Ես կույր եմ հիմա, անբախտ ու մենակ
Հավերժում կորած մի մոլոր ասուպ.
Սահում Է կյանքը հյուսելով ժանյակ,
Անցնում եմ վիհեր, լեռներ երկնահուպ,
Ինձ համար չըկա ժամ ու ժամանակ,
Ես մի մոլորված, մի տխուր ասուպ...

1907